

Ք Ի Ւ Ր Տ Ե Ր ՈՒ ԵՒ Հ Ա Յ Ե Ր ՈՒ Ա Չ Ա Տ Ա Գ Ր Ա Կ Ա Ն  
ՇԱՐԺՈՒՄՆԵՐՈՒ ՓՈՒԼԵՐԸ ԵՒ ԱՆՈՆՑ ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Գրեց՝ Կ. ՍԱՍՈՒՆԻ

I

ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ բարեկամութիւնը Փոքր Ասիոյ քաղաքական խոշոր երեւոյթներէն մէկն է, որուն վրայ իրաւացիօրէն պէտք է կեդրոնանայ մեր ուշադրութիւնը: Ներկայի այդ բարեկամական փոխյարաբերութիւնն է այն ամուր հիմքը, որուն վրայ կարելի է կառուցանել երկու ազգերու ազատագրութեան չէնքը, — իւրաքանչիւրի անկախ ազգային պետութիւնը:

Այսքան ճակատագրական նշանակութիւն ունեցող հայ-քրդական համագործակցութեան մը կարեւորութիւնը իր ամբողջ էութեամբ, անցեալին մէջ, չէ ըմբռնուած, ու հիմա ալ կարող է իր նպատակէն շեղիլ, եթէ այս երկու բախտակից եւ հայրենակից ազգերը դասեր չառնեն պատմութենէն, ու չկենան ամուր՝ իրենց ազատագրութեան ճանապարհի վրայ, ընդդէմ Թուրքիոյ, բարեկամ ու գործակից իւրարու:

Այս խորհրդածութիւններուն կը մղուիմ, նկատի ունենալով՝ մէկ կողմէ հայ իրականութեան մէկ մասի թերահաւատ վերաբերմունքը հանդէպ քրդական շարժման, միւս կողմէ թըրքական այն խոշոր դաւադրութիւնը, որ երեւան կուզայ «ներում»ի եւ «բարեկարգութեան» անուան տակ, խարելու եւ վրիպեցնելու համար քրդական ընդարձակածաւալ շարժումը, որ իր տեսակին մէջ միակ մահացու հարուածն է՝ ուղղուած նոր ու ամբարտաւան Թուրքիոյ դէմ:

Հայաստանի եւ Քիւրդիստանի ազատագրական շարժումները հասած են իրենց լարուածութեան գագաթնակէտին: Քաղաքական մտածողութիւնը, երկու ազգերու մէջ ալ, յստակ է եւ ձեւակերպուած: Երկու ժողովուրդներն ալ կը ձգտին քաղաքական անկախութեան եւ կ'ուզեն վերջնականօրէն ազատիլ ու անջատուիլ Թուրքիայէն, որ հինգ հարիւր տարուան բռնի տիրապետութիւն մը հաստա-

տած է այդ երկու երկիրներու վրայ: Ու այս յստակ եւ լուսաւոր նպատակին հասնելու համար՝ անոնք դիմած են ազատագրական միակ ճանապարհին, որ է յեղափոխական անողոք կռուով հասնիլ ազատութեան եւ ազգային վերածնունդին:

Պատմութեան այս լարուած փուլը կը պահանջէ տոկունութիւն, միացեալ ուժ ու գործունէութիւն, եւ երկու ազգերու ներդաշնակ շահի զիտակցութիւն: Եթէ անոնցմէ մէկն ու մէկը սայթաքի, ճակատագրականօրէն պիտի տուժեն երկուքն ալ. պատմութեան անիւր պիտի դառնայ, ճգմելով մէկը, որպէսզի յետոյ ճգմէ միւսը: Անցեալ պատմութիւնը հարուստ է այնպիսի տուեալներով, որոնք կը վկայեն թէ՛ եթէ հայ-քրդական միութիւնը գոյութիւն ունենար, երկու ազգերն ալ շատոնց իրենց ազատութիւնը գտած կ'ըլլային:

Հայ-քրդական համագործակցութեան քաղաքական կարեւորութիւնը ըմբռնելու համար, հայերը պէտք է պահ մը դադրին իրենց աչքերը հեռու հզօրներու վրայ պտըտցնելէ, ու իրենց ուշադրութիւնը դարձնեն մեր ժողովրդին հետ շարխուած ազգերու վրայ, զիտակցելով որ իրական ուժը ատոնք կը ներկայացնեն եւ մեր ազգին վնասն ու շահը պայմանաւորուած է անոնց այս կամ այն կարգի շարժումներէն եւ քաղաքական հակումներէն:

Միւս կողմէն քիւրդերը պէտք է դառ անոնեն դարաւոր այնքան յատկանշական պատմութենէն, ձեռք քաշեն հին իսլամական հովերէն, թուրքի հանդէպ իրենց ատելութիւնը քաղաքական համոզման վերածեն, դադրին հայուն վրայ նայելէ իրրեւ հպատակ ժողովուրդի եւ ամուր պահեն այն զիտակցութիւնը, որ 1925-ի Շէյխ Սաիտ Նախաբանդիի ապստամբութենէն յետոյ սկսած է համոզում դառնալ քիւրդերուն մէջ, այսինքն՝ այն որ՝ իրենք եւ հայերը բախտակից են եւ իրենց ազատագրական կռիւր ուղղուած է Թուրքիոյ դէմ:

Հայ-քրդական ազատագրական շարժման